ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԻԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 77- 78 (16273) ՇԱԲԱԹ, 4 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2014 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ 69-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ՆՎԱՃԵՆՔ ԺՈՂՈՎՐԴԻ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՄԱՆԴԱՏԸ»

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԵԼՈՒՅԹԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին Նյու Յորքում, աշխատանքային այցի շրջանակներում, մասնակցեց ՄԱԿ-ի կլիմայական գլոբալ փոփոխությունների հարցին նվիրված խորհրդաժողովին, ապա ելույթ ունեցավ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 69-րդ նստաշրջանի շրջանակներում անցկացվող ընդհանուր քաղաքական բանավեճին:

Անդրադառնալով Ռուսաստանի հետ հարաբերությունների հարցին՝ Վրաստանի վարչապետը հայտարարեց, որ Վրաստանը ձգտում է նորմալացնել հարաբերությունները Ռուսաստանի հետ, բայց ոչ ի վնաս «ինքնիշխանության եւ անկախության»: Նրա խոսքերով, այդ նպատակով Թբիլիսին նոր քաղաքականություն է որդեգրել Մոսկվայի հետ հարաբերություններում:

«Մենք՝ վրացիներս, ցանկանում ենք լավ հարաբերություններ ունենալ Ռուսաստանի հետ, բայց ոչ ի վնաս մեր ինքնիշխանության ու անկախության: Ուստի, Ռուսաստանի հետ հարաբերություններում մենք առաջնորդվում ենք այնպիսի ռազմավարությամբ, որը հիմնված է պատասխանատու, պրագմատիկ եւ կառուցողական հարեւան լինելու ձգտման վրա»,- ասել է նա:

Մասնավորապես, Ղարիբաշվիլու խոսքով, Թբիլիսին «առանց նախապայմանների» Մոսկվայի հետ երկխո-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՏԱՐԵԼԻՑ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՆՇՎԵՑ ՀԻՇԱՏԱԿԻ ԵՎ ՀՈՒՍՈ ՕՐԸ

Սեպտեմբերի 27-ին Վրաստանում նշվեց Հիշատակի եւ հուսո օրը: Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան Թբիլիսիի Հերոսների հրապարակում ծաղկեպսակ դրեցին Վրաստանի տարածքային ամբողջականության համար զոհվածների հուշահամալիրին:

«Այսօր այն օրն է, երբ ընկավ Սուխումին: Ապագայում մենք կվերադառնանք այնտեղ հաշտության արդյունքում: Սեպտեմբերի 27-ը պատերազմի ավարտն էր, ապագան կլինի հաշտությունը, Սուխումիի վերադարձը»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

Պաշտոնական տվյալների համաձայն, Աբխազիայում ռազմական գործողությունների ընթացքում զոհվեց շուրջ 20 հազար մարդ, իսկ մոտավորապես 300 հազար մարդ զրկվեց օթեւանից ու փախստական դարձավ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎՈՒՄ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին Թուրքիայում, աշխատանքային այցի շրջանակներում, մասնակցեց համաշխարհային տնտեսական գագաթաժողովին:

Հանրագումարելով իր այցի արդյունքները՝ երկրի ղեկավարը նշեց նման գագաթաժողովների անցկացման կարեւորությունը: «Նման հանդիպումները հնարավորություն են ընձեռում երկկողմ բանակցություններ վարել այլ երկրների ղեկավարների հետ, ներկայացնել երկրի առաջնահերթությունները, նպաստել համագործակցության նոր ուղիների հայթայթմանը»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին եւ հավելեց, որ գագաթաժողովը հիանալի հնարավորություն է ներկայացնելու այն հնարավորությունները, որը Վրաստանին եւ հարեւան երկրներին ընձեռել է Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագրի ազատ առեւտրի մասին պայմանը:

Նախագահի խոսքերով, այցի շրջանակներում ինքը հանդիպումներ ունեցավ Թուրքիայի նախագահ էրդողանի, Ղրղզստանի նախագահ Ալմազբեկ Ատամբաեւի հետ: Հանդիպումներին քննարկվել են տարածաշրջանային անվտանգության, տարբեր ոլորտներում տնտեսական համագործակցության ընդլայնման եւ խորացման հետ առնչվող հարցեր:

«ԹԲԻԼԻՍՈԲԱ-2014»

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՏՈՆԸ ԿՆՇՎԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-26-ԻՆ

Վրաստանի մայրաքաղաքի օրը՝ «Թբիլիսոբա», այս տարի կնշվի հոկտեմբերի 25-ին եւ 26-ին՝ ամսվա վերջին հանգստյան օրերին:

Այդ մասին հայտնել են Թբիլիսիի քաղաքապետարանի մամուլի ծառայությունում:

«Այս տարի «Թբիլիսոբա» տոնը ավանդաբար կանցկացվի հոկտեմբեր ամսվա վերջին հանգստյան օրերին: Դեռեւս վաղ է խոսել ծրագրերի մասին: Ներկայում համապատասխան ծառայություններն աշխատում են դրա վրա»,- հայտարարեցին Թբիլիսիի քաղաքապետարանում:

«Թբիլիսոբա» Վրաստանի բնակիչների առավել սիրված տոներից մեկն է: Այս տարի մայրաքաղաքի օրը, որը սկիզբ է առնում 1979 թվականի հոկտեմբերից, կնշվի 35-րդ անգամ: Մինչեւ 1988 թվականն այն անցկացվում էր ամեն տարի, 1988-ից մինչեւ 1994 թվականը չէր նշվում հասարակական-քաղաքական իրադրության սրվելու պատճառով, իսկ 1995 թվականին վերականգնվեց:

ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԼԻՑ

ԴԱ ՄԵՐ ԵՐԿՐԻ ՈՒ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿՆ ԷՐ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եւ վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին երկրում խաղաղ իշխանափոխության երկրորդ տարեդարձի առթիվ շնորհավորական ուղերձով դիմել են Վրաստանի բնակչությանը:



Վրաստանի նախագահի համոզմամբ, երկու տարի առաջ՝ 2012 թվականի հոկտեմբերի մեկին, ժողովրդավարական ընտրությունների արդյունքներով իշխանափոխությունը Վրաստանի համար պատմական իրադարձություն էր: «Այդ օրը վրացական ժողովրդավարության միասնության սկիզբն էր, եւ այն պահանջում է մշտական զարգացում, մեր կողմից մշտական ջանքերի գործադրում: Ժողովրդավարական գործընթացները պետք է շարունակվեն ու խորացվեն: Միայն այդպես հասարակական

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԲԱՑՎԵՑԻՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՆՈՐ ՏԵՂԱՄԱՍԵՐ

Վրաստանի ներքին գործերի նախարար Ալեքսանդր Ճիկաիձեն Վրաստանի եւ Հայաստանի պետական սահմանների որոշ հատվածներում բացել է երկու սահմանային տեղամասեր:

Սեպտեմբերի 26-29-ին Վրաստանի ՆԳ նախարար Ալեքսանդր Ճիկաիձեն եւ սահմանային ոստիկանության պետ, գեներալ-մայոր Զուրաբ Գամեզարդաշվիլին հանդիսավոր պայմաններում բացեցին Վրաստանի պետական սահմանային ոստիկանության երրորդ վարչության «Կարմիր կամուրջ» դեպարտամենտի չորրորդ՝ «Աղքյորփի» եւ հինգերորդ՝ «Բերդաձոր» տեղամասերի շենքերը:

Տեղի բնակիչները դիտեցին նորաբաց շինություններն ու գոհունակություն հայտնեցին նոր ենթակառույցի գործարկման կապակցությամբ:

2014 թվականին Վրաստանի ներքին գործերի նախարարությունը հատկացրել է նոր միջոցներ Վրաստանի եւ Ռուսաստանի, Հայաստանի ու Ադրբեջանի սահմանագծում նոր սահմանային գոտիների կառուցման համար: Ըստ նախարարության, դա կնպաստի սահմանապահների ծառայության բարելավմանը:

Վրաց-ռուսական սահմանագոտում կառուցվել է երեք սահմանային տեղամաս, վրաց-ադրբեջանականում՝ 2, իսկ Հայաստանի հետ սահմանագոտում՝ 5 տեղամաս:

ԵԽԽԱ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՐՑՈՎ ԸՆԴՈՒՆՎԵՑ ԲԱՆԱՁԵՎ

Հոկտեմբերի 1-ին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական ասամբլեան իր աշնանային նստաշրջանում քննարկեց եւ ընդունեց «Վրաստանում ժողովրդավարական ինստիտուտների գործառնության» զեկույցը:

Բանաձեւի տեքստը ներկայացվեց խորհրդարանական ասամբլեայի համանախագահներ Մայքլ Ենսենի եւ Բորիս Սիլեւիչի կողմից: Զեկուցագրում ներառված է բոլոր այն իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել Վրաստանում վերջին տարվա ընթացքում: Մասնավորապես, Նախարարների կաբինետում իրականացված կադրային փոփոխությունները, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու եւ նախա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԼԻՑ

ԴԱ ՄԵՐ ԵՐԿՐԻ ՈՒ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿՆ ԷՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կյանքը կարող է թեւակոխել զարգացման նոր փուլ, լիարժեք պաշտպանել ազգային շահերը, ապագայի մեր միտումը, որը երկու տարի առաջ մեզ միավորեց, դարձրեց իրատեսական»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

Վրաստանի վարչապետի խոսքերով, 2012 թվականի հոկտեմբերի 1-ին կայացած խորհրդարանական ընտրություններում քվեարկելով «Վրացական երազանք» կոալիցիայի օգտին, Վրաստանի ժողովուրդն ընտրեց կյանքն առանց վախի:

«Վրացական երազանքը», որը հիմնել է վրացի միլիարդատեր Բիձինա Իվանիշվիլին, խորհրդարանական ընտրությունների արդյունքներով իշխանության գլուխ է անցել 2012 թվականի հոկտեմբերին՝ փոխարինելով «Ազգային միասնական շարժում» կառավարող կուսակցությանը, որն այն ժամանակ գլխավորում էր Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին:

Ղարիբաշվիլու խոսքով, Վրաստանի կառավարության գլխավոր նպատակը «մեր հայրենիքի միավորումն է մեր աբխազ եւ օս եղբայրների հետ հաշտվելու միջոցով»:

«Մենք պետք է աշխատենք միասին, որպեսզի ուժեղացնենք մեր առաջշարժումը, եւ մեր պետությունը մեկընդմիշտ դնենք ճիշտ ուղու վրա... Ես մեկ անգամ եւս շնորհավորում եմ բոլորին հոկտեմբերի 1-ի առթիվ: Դա մեր երկրի եւ ժողովրդի շատ մեծ հաղթանակն է, այդ թվում՝ նրանց հաղթանակը, ովքեր չեն քվեարկել մեր օգտին»,- եզրափակեց Վրաստանի վարչապետը:

ԵՒԽԱ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՐՑՈՎ ԸՆԴՈՒՆՎԵՑ ԲԱՆԱՁԵՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

գահ Գիորգի Մարգվելաշվիլու հարաբերություններում առկա լարվածությունը: Բացի այդ, փաստաթղթում շոշափված են այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ սահմանադրական եւ դատական բարեփոխումները, տեղական ինքնակառավարման բարեփոխումը, համաներումը, ռուս-վրացական 2008 թվականի պատերազմի հետեւանքները, ապօրինի հետապնդումները եւ այլն:

Բանաձեւում գնահատական է տրվում Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլու դեմ հարուցած քրեական հետապնդումներին: Փաստաթղթի համաձայն, ճիշտ է, ոչ մեկը օրենքից բարձր կանգնած չէ, սակայն հարկ է պահպանել միջազգային իրավունքի սկզբունքները: Բանաձեւում խորհուրդ է տրվում նաեւ վերանայել Վրաստանի պաշտպանության նախկին նախարար Բաչո Ախալաիայի նկատմամբ հարուցած կանխման միջոցը:

Խորհրդարանական ասամբլեան Վրաստանի խորհրդարանին կոչ է անում նվազեցնել դատավորների նշանակման եռամյա փորձաշրջանի տեւողությունը: Միաժամանակ, ասամբլեան Վրաստանի իշխանություններին հիշեցնում է երկրում անկախ դատավարության հարցով մինչ այդ արտահայտած անհանգստության մասին:

Եվրախորհրդի Խորհրդարանական ասամբլեան ընդունած բանաձեւում Վրաստանի իշխանություններին կոչ է անում ստորագրել եւ վավերացնել տարածաշրջանային լեզուների կամ փոքրամասնության լեզուների մասին եվրոպական խարտիան, այսինքն՝ այն պարտավորությունը, որը Վրաստանը ստանձնել էր Եվրոպայի խորհրդին անդամակցության ժամանակ:

Բանաձեւում նշվում է, որ աճում է անհանգստությունը փոքրամասնությունների, առանձնապես կրոնական եւ սեռական փոքրամասնությունների դեմ ցուցաբերած անհանդուրժողականության ու խտրական գործողությունների կապակցությամբ:

Խորհրդարանական ասամբլեան ընդունած բանաձեւում մտահոգություն է հայտնում նաեւ քաղաքացիների նկատմամբ իրավապահ մարմինների կողմից իրականացվող գաղտնի հետապնդումների կապակցությամբ եւ գտնում է, որ հարկ է կատարելագործել օրենքն այն հաշվով, որպեսզի կարգավորվի իրավապահ մարմինների կողմից տվյալների հավաքման եւ հետապնդումների գործառույթը:

ԳՈՐԾԱԴԻՐ-ՕՐԵՆՍԴԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին աշխատանքային հանդիպում ունեցավ խորհրդարանական մեծամասնության լիդերների հետ:

Հանդիպմանը քննարկվեց Վրաստանի 2015 թվականի պետական բյուջեի նախագիծը, որը ներկայացվել է երկրի օրենսդիր բարձրագույն մարմնի քննարկմանը:

Ինչպես նշեց վարչապետը, 2015 թվականի բյուջեն կողմնորոշված է մարդու եւ նրա սոցիալական պայմանների բարելավման կողմը: Վարչապետի հայտարարությամբ, բյուջեում սոցիալական ծախսերը ավելացվել են գրեթե 1 միլիարդով: «Մենք առավելագույնս ձգտում ենք լուծել տարիների ընթացքում բնակչության կուտակված հիմնախնդիրները: Կառավարությունը եւ ֆինանսների նախարարությունն ակտիվորեն կհամագործակցեն խորհրդարանի հետ, որպեսզի բյուջեն լինի առավելագույնս արդյունավետ ու հստակ»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Իր հերթին, Վրաստանի խորհրդարանի ֆինանսա-բյուջետային կոմիտեի նախագահ Դավիթ Օնոփրիշվիլին նշեց, որ 2015 թվականի բյուջեում առանձնակի տեղ է հատկացված համընդհանուր առողջապահության պետական ծրագրի ընդլայնմանը:

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼ Է ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱՆԵՐՈՒՄ

Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նարմանիայի նախաձեռնությամբ, մայրաքաղաքում հայտարարվել է շինարարական համաներում:

Քաղաքապետի խոսքերով, բոլոր նրանք, ովքեր ցանկանում են օրինականացնել ապօրինի կառուցած կցաշենքերն ու մասնաշենքերը, այն կարող են իրականացնել մինչեւ նոր տարի: «Սոցիալապես անպաշտպան քաղաքացիների համար, ովքեր չեն կարողանում վճարել տարիների ընթացքում կուտակված տուգանքները, կհայտարարվի շինարարական համաներում: Կարծում եմ, որ մինչեւ աշնան վերջը մենք կավարտենք նախապատրաստական աշխատանքները, եւ հաջորդ տարվանից ապօրինի կառույցների սեփականատերերը կազատվեն տուգանքներից»,- հայտարարեց Դավիթ Նարմանիան:

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՐՏԱԴՐԻ'Ր ՎՐԱՍՏԱՆՈՒՄ»՝ ԾՐԱԳԻՐԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սեպտեմբերի 30-ի դրությամբ, կառավարական «Արտադրի'ր Վրաստանում» ծրագրի շրջանակներում, 12 գործարարի տրվել է տեղական արտադրանք թողարկելու հնարավորություն:

Պետությունը շահագրգռված անձանց առաջարկում է ֆինանսական, ենթակառույցային եւ խորհրդատվական աջակցություն: Այդ մասին տեղեկացրել է Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարությունը:

Ենթակառույցային բաղադրիչի վարչարարությունն իրականացնում է պետական գույքի ազգային գործակալությունը: Ծրագրի շրջանակներում ներկայացված պետգույքը տրված է www.nasp.gov.ge. կայքէջում:

Շահագրգռված անձանց տրվել է գույքի ընտրության եւ ընտրված օբյեկտում նոր արտադրություն բացելու հնարավորություն: Գործարարների գույքը գործնականում տրվում է անվճար՝ խորհրդանշական մեկ լարի արժեքով, սակայն նրանք իրենց կողմից պարտավորվում են վերոնշյալ գույքի օգտագործման համար Թբիլիսիի մասշտաբով իրականացնել գույքի արժեքի վեցակի, երկրի մասշտաբով՝ քառակի ներդրումներ, ինչպես նաեւ երկու տարվա ընթացքում ապահովել արտադրանքի թողարկումը:

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, Վրաստանի կառավարությունը 2014 թվականի հունիսի 1-ից ձեռնամուխ է եղել «Արտադրի'ր Վրաստանում» ծրագրի իրականացմանը, որի բյուջեն կազմում է 46 միլիոն լարի: Այդ գումարից 30 միլիոնը ծախսվելու է գյուղատնտեսական մթերքների արտադրության-վերամշակման վրա, իսկ մնացած 16 միլիոնը՝ ինդուստրիալ ապրանքների թողարկման համար: Ծրագիրը իրականացնում են էկոնոմիկայի եւ կայուն զարգացման ու գյուղատնտեսության նախարարությունները:

Ծրագրի շրջանակներում, բանկերը տալիս են արդյունաբերական վարկեր, որի տոկոսադրույքի 10 տոկոսը վարկի հանձնման պահից 24 ամսվա ընթացքում մարում է կառավարությունը: Բանկերի կողմից ծրագրի շրջանակներում տրվող նվազագույն վարկի չափն առնվազն կազմում է 150 հազար դոլար, առավելագույնը՝ 2 միլիոն դոլար:



ՈՒԿՐԱԻՆԱ
ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐՍԿՍՎԵՑԻՆ

Հարավ-արեւելյան Ուկրաինայում, կարճատեւ հրադադարից հետո, վերսկսվեցին մարտական գործողությունները:

Հոկտեմբերի 2-ին Դոնեցկի գնդակոծումների հետեւանքով զոհվել են տասնյակ բնակիչներ: Զոհվածների թվում է նաեւ Կարմիր խաչի աշխատակից, Շվեյցարիայի քաղաքացի Լորան Դյուպասկեն:

Հրադադարի ռեժիմի պահպանման կոչով կողմերին դիմել է ԵԱՀԿ-ի գործող ղեկավար, Շվեյցարիայի նախագահ Դիդյե Բուրկհալտերը:

Ուկրաինայում լայնամասշտաբ մարտական գործողությունների վերսկսումը կարող է աղետի հանգեցնել ոչ միայն այդ երկրում, այլեւ տարածաշրջանում ու դրա սահմաններից դուրս: Այս նախազգուշացմամբ հանդես է եկել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունը: Պան Գի Մունը կոչ է արել բոլոր կողմերին «խստիվ կատարել սեպտեմբերի 19-ին Մինսկի պայմանավորվածությունների շրջանակներում իրենց ստանձնած պարտավորությունները հրադադարի կայուն ռեժիմն ապահովելու նպատակով»:

ՍԻՐԻԱ
ՌՄԲԱԿՈԾՎԵԼ ԵՆ ԻԼԻՊ-Ի ՀԵՆԱԿԵՏԵՐԸ

ԱՄՆ-ի եւ իր դաշնակից երկրների օդանավերը հարվածներ են հասցրել Սիրիայի Ռակկա մարզի ԻԼԻՊ (Իրաքի եւ Լեւանտի Իսլամական Պետություն) կազմակերպության դիրքերի ուղղությամբ: Օդային հարվածները հասել են ահաբեկիչների վերահսկողության տակ գտնվող հացահատիկային պահեստներին, գազի վերամշակման խոշորագույն գործարանին:

Ռմբակոծություններին մասնակցել են Ֆրանսիան, Սաուդյան Արաբիան, Արաբական Միացյալ Էմիրությունները, Յորդանանը, Բահրեյնը եւ Քաթարը: Մասնակցության ցանկություն են հայտնել Մեծ Բրիտանիան, Դանիան, Ավստրալիան, Նիդերլանդները, Բելգիան:

ՆԱՏՕ
ԵՆՍ ՍՏՈԼՏԵՆԲԵՐԳԸ՝ ԱԼՅԱՆՍԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՆԱՏՕ-ի նոր գլխավոր քարտուղար Ենս Ստոլտենբերգը Հյուսիսատլանտյան խորհրդի առաջին նիստն է վարել նախագահի կարգավիճակում:

«Ես անհամբերությամբ եմ սպասում աշխատանքի սկսվելուն, եւ ինձ համար մեծ պատիվ է լինել ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը»,- հայտարարել է Ստոլտենբերգը՝ իր առաջին աշխատանքային օրը ժամանելով Հյուսիսատլանտյան դաշինքի կենտրոնակայան:

Այդ պաշտոնում նա փոխարինել է Անդերս Ֆոգ Ռասմուսսենին:

ԻՍՊԱՆԻԱ
ԿԱՏԱԼՈՆԻԱՅՈՒՄ ԿԱՍԵՑՎԵԼ Է ՀԱՆՐԱՔՎԵՆ

Իսպանիայի Սահմանադրական դատարանը քննության է ընդունել երկրի կառավարության հայցը, որը պահանջում է սահմանադրությանը հակասող ճանաչել «Բնակության՝ հանրաքվեի բնույթ չկրող հարցումների անցկացման մասին» օրենքը եւ նոյեմբերի 9-ին Կատալոնիայի անկախության շուրջ հարցում նշանակելու մասին հրամանագիրը:

Նշենք, որ Իսպանիայի Կատալոնիայի ինքնավար մարզի ղեկավար Արթուր Մասը սեպտեմբերի 27-ին հրամանագիր էր ստորագրել նոյեմբերի 9-ին Իսպանիայից անկախության հանրաքվե անցկացնելու մասին: Կատալոնիայի կառավարությունը որոշում է ընդունել ենթարկվել Իսպանիայի Սահմանադրական դատարանի որոշմանը եւ կասեցնել անկախության հանրաքվեի նախապատրաստման արշավը:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՕՐԵՆՍԴԻՐ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ՉԵՆ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԱՇԽԱՏԵԼ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին «Միասնական ազգային շարժումից» պատգամավորներին կոչ արեց միանալ Թբիլիսիում օրենսդրական մարմնի աշխատանքին:

Սույն հայտարարությունը խորհրդարանի խոսնակն արեց բյուրոյի նիստին, որն անցկացվեց Թբիլիսիում: Նա ընդգծեց, որ խորհրդարանը գործում է՝ համաձայն երկրի սահմանադրության եւ ընդունած աշխատակարգի:

Հիշեցնենք, որ, սկսած աշնանային նստաշրջանից, Վրաստանի խորհրդարանը մասնակիորեն աշխատանքը վերսկսեց Թբիլիսիի խորհրդարանի շենքում: Այստեղ անցկացվում են բյուրոյի նիստերը, ինչպես նաեւ կոմիտեների ու խմբակցությունների հավաքները: Սույն որոշումը բողոք առաջացրեց «Միասնական ազգային շարժման» պատգամավորների կողմից, ովքեր կառավարող «Վրացական երազանք» կոալիցիային մեղադրում են սահմանադրության խախտման մեջ, եւ հայտարարել են, որ Թբիլիսիում անցկացվող նիստերին չեն մասնակցի:

ԾՐԱԳՐՎՈՒՄ Է ԾԽԱԽՈՏԵՂԵՆԻ ԹԱՆԿԱՑՈՒՄ

Մոտ ժամանակներս Վրաստանի խորհրդարանը ծեռնամուխ կլինի հարկային օրենսգրքում կատարվելիք փոփոխությունների քննարկմանը, ըստ որի, ծրագրվում է ավելացնել ծխախոտի աքցիզների սակագինը:

«Մենք պետք է մեր օրենսդրությունը համապատասխանեցնենք ծխախոտի դեմ պայքարի ուղղությամբ առողջապահության համաշխարհային կազմակերպության շրջանակային կոնվենցիայի հոդվածներին: Ծխողների թվի նվազեցման ուղղությամբ կոնվենցիայի կարեւոր հանձնարարականներից մեկը ծխախոտի աքցիզների սակագնի բարձրացումն է: Դա մեկ անգամ արդեն արվել է, իսկ հաջորդ փուլը ծրագրվում է իրականացնել 2015 թվականին»,- հայտարարեց առողջապահության եւ սոցիալական հարցերով խորհրդարանական կոմիտեի նախագահ Դմիտրի Խունդաձեն: Նրա խոսքերով, սակագնի ավելացման չափը սահմանելու է Վրաստանի ֆինանսների նախարարությունը:

Հիշեցնենք, որ վերջին անգամ սիգարետի գինը ավելացվել է 2013 թվականի սեպտեմբերին: Ֆիլտրով սիգարետի աքցիզը այն ժամանակ 0,6-ից հասցվել էր 0,75 լարիի, իսկ անֆիլտրի սիգարետինը՝ 0,15-ից մինչեւ 0,2 լարի:

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿ

ՏԱՐԵՐՔԻ ՀԱՍՑՐԱՇ ՎՆԱՍԸ ԿՓՈԽՀԱՏՈՒՅՎԻ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին ծանոթացավ տարերային աղետի գոտում ստեղծված իրավիճակին:

Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների փոխնախարար Գիորգի Կոբերիձեն հայտնեց, որ վարչապետի նախաձեռնությամբ ստեղծված արտակարգ շտաբը գործում է շուրջօրյա աշխատակարգով: Շտաբի աշխատանքը համակարգում է պետական անվտանգության եւ ճգնաժամերի կառավարման խորհրդի քարտուղար Մինդիա Ջանելիձեն: Աղետի գոտում են գտնվում Նախարարների կաբինետի անդամները:

Տարերային աղետի գոտում ստեղծված իրավիճակը քննարկվեց նաեւ սեպտեմբերի 30-ին անցկացված կառավարության նիստում: Ինչպես հայտարարեց վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, ջրհեղեղից բնակչությանը հասցրած վնասը լրիվությամբ կփոխհատուցվի պետության կողմից:

Հիշեցնենք, որ անցած շաբաթվա սկզբին Վրաստանի հարավ-արեւմուտքում տեղացած սաստիկ անձրեւների հետեւանքով ջրասույզ էին եղել 700-ից ավելի տների ու շենքերի առաջին հարկերն ու նկուղները, տասնյակ առեւտրական օբյեկտներ: Տարերքը լուրջ վնաս էր պատճառել Խելվաչաուրիի եւ Օզուրգեթիի շրջաններին, Փոթի ու Բաթումի քաղաքներին, ինչպես նաեւ դրանց հարակից տարածքներին: Մի քանի շրջաններում տեղի են ունեցել սողանքներ, որոնք վնասել էին ավտոճանապարհները, շարքից դուրս էին եկել էլեկտրահաղորդման գծեր: Օզուրգեթիի շրջանում տեղատարափ անձրեւների հետեւանքով կամուրջ է քանդվել, վնասվել են ավտոմայրուղիներ, ինչը հանգեցրել է մի շարք բնակավայրերի հետ ավտոմոբիլային հաղորդակցության դադարեցման:

Գետերի վարարման հետեւանքով, ողողվել են մի քանի հազար հեկտար գյուղատնտեսական հանդակներ, ջրի տակ են հայտնվել հարյուրավոր շենքերի բակերն ու առաջին հարկերը: Սեպտեմբերի 28-ին Վրաստանի արեւմուտքում սկսել է գործել հորդառատ անձրեւների հետեւանքների կանխման ու վերացման հատուկ շտաբը:

Արտակարգ շտաբի Բաթումիում անցկացված նիստում վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին նշեց, որ տարերքի տուժյալների փոխհատուցման եւ ենթակառույցների վերականգնման համար կառավարությունը հատկացրել է 40 միլիոն լարի:

ԿՄՇԱԿՎԻ ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԱՐԱԳ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարությունը ծեռնամուխ է եղել տարերային աղետների հետեւանքների արագ վերացման մեխանիզմների մշակմանը:

Այդ մասին տարածաշրջանների նահանգապետերի հետ հանդիպմանը հայտարարեց նախարար Դավիթ Շավլիաշվիլին:

Հանդիպմանը քննարկվեցին նաեւ այն հարցերը, որոնք թույլ են տալիս արագ կարգավորել տեղական հիմնախնդիրները: Մասնավորապես, կենցաղային մնացորդների կառավարման հարցը, առանձնակի ուշադրություն հատկացվեց սեւծովյան ափի մաքրման հիմնախնդրին: Նահանգապետերի տեղեկատվությամբ, այս տարի զբոսաշրջիկների թիվն ավելացել է 200 տոկոսով, եւ կենցաղային աղբի դուրսբերման ու տարածքների մաքրման համար ծագեց ողջ տեխնիկայի ու աշխատուժի մոբիլիզացման անհրաժեշտություն:

Հանդիպմանը քննարկվեցին նաեւ վարչական շենքերի կարգավորման հետ առնչվող հարցեր:

ԳՈՐԾԱԴԻՐ

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ԹՈՒՐՔ-ՄԵՍԽԵԹՑԻՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի կառավարությունը հաստատել է թուրք-մեսխեթցիների հայրենադարձության ռազմավարությունը: Փաստաթղթում տրված է ընդհանուր դրույթները, որոնք առնչվում են 40-ական թվականներին արտաքսված թուրք-մեսխեթցիների արժանավոր հայրենադարձությանը եւ վրաց հասարակայնությանը նրանց ինտեգրմանը: Միաժամանակ, կառավարությունը մտադիր է մշակել ծրագիր, որտեղ նշվելու են կոնկրետ մեխանիզմները, գործողություններն ու ընթացակարգը:

Ինչպես նշված է ռազմավարությունում, արժանավոր հայրենադարձությունը նախատեսում է նրանց առավելագույն տեղեկատվությունը եւ իրավական նոր միջավայրում համապատասխանությունը: Թուրք-մեսխեթցիների ինտեգրմանն աջակցելու նպատակով, ռազմավարությունում ընդգծվել է նրանց մշակութային ինքնության պահպանումը, միաժամանակ նշվել է պետական լեզվի իմացության անհրաժեշտությունը: Ռազմավարությունում նշված բոլոր միջոցառումներն իրականացվելու են դոնորների ֆինանսական աջակցությամբ:

Հիշեցնենք, որ, 1999 թվականին Եվրոպայի խորհրդին անդամագրվելիս, Վրաստանը ստանձնել է 40-ական թվականներին Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանից արտաքսված մահմեդական բնակչության վերադարձման պարտավորությունը: Հայրենադարձության դիմումների ներկայացման ժամկետը սպառվել է 2010 թվականի հունվարի 1-ին: Այդ ժամանակահատվածում դիմում է ներկայացրել 5841 չափահաս դիմորդ, որից 1349-ն արդեն ստացել է կարգավիճակ:



ԱՍՊԻՆՁԱՅՈՒՄ ՆՇՎԵՑ «ՇՈԹԱՌԲԱՆ»

Սեպտեմբերի 27-ին Ասպինձայի շրջանի Վարձիա քաղաք-ամրոցի ու վանական համալիրի մերձակայքում նշվեց ավանդական «Շոթառբան»: Ավանդական տոնին մասնակցելու համար ժամանել էին հյուրեր հարեւան շրջաններից ու Թբիլիսիից: Տոնի շրջանակներում, անցկացվեցին ցուցահանդեսներ, գրական ընթերցումներ, վերջում տրվեց տոնական համերգ:

Հանդիսությանը ելույթ ունեցան Վրաստանի գրողների միության նախագահ Ռեւազ Միշվելաձեն, Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի նահանգապետ Ակակի Մաչուտաձեն, Ասպինձայի մունիցիպալիտետի վարչության նախագահ Լեւան Ցաբաձեն:

ՄԱՐԴԱՀԱՄԱՐ՝ ԲԱՐՁՐԱԼԵՌ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Վրաստանի վիճակագրության ազգային ծառայությունը երկրի բարձրալեռ մունիցիպալիտետներում սկսել է բնակչության մարդահամարը: Ինչպես նշեց վիճակագրական ծառայության գործադիր տնօրեն Մերի Դաուշվիլին, բնակչության համընդհանուր մարդահամարի շրջանակներում գործընթացը սկսվել է Մեստիայի, Ղազբեգիի, Դուշեթիի եւ Ախմետայի տարածաշրջաններում: Նրա խոսքերով, մարդահամարի նախնական տվյալները կհրապարակվեն 2015 թվականի ապրիլին:

Նշենք, որ Վրաստանի ողջ տարածքում բնակչության համընդհանուր մարդահամարը կանցկացվի նոյեմբերի 5-19-ին, մարդահամարի արդյունքները հայտնի կդառնան 2015 թվականի ապրիլին: Նախատեսված է յուրաքանչյուր 18 ամիսը մեկ անցկացնել մարդահամար:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԿՏԻՎԱՆՈՒՄ Է

Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիայի հրավերով, Թբիլիսիում էր գտնվում Մոլդովայի պաշտպանության նախարար Վալերիու Տրոենկոն:

Երկու երկրների պաշտպանության նախարարները համաձայնագիր ստորագրեցին ռազմական համագործակցության մասին:

Հանդիպմանը նախարարները քննարկեցին ռազմական ոլորտում երկկողմ հարաբերությունների տարբեր ասպեկտներ, դրանց ընդլայնման հեռանկարները եւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ թեմաներ:

Թբիլիսիում Վալերիու Տրոենկոն հանդիպում ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու եւ Եվրոպական ու Եվրատլանտյան կառույցներին Վրաստանի ինտեգրման հարցերով պետնախարար Ալեքսի Պետրիաշվիլու հետ:

ԹԱԼԱՆՈՒՄ ԵՆ ԵՐԿԱԹԳԻԾԸ

Թեթրիծղարոյի շրջանի ՆԳ վարչության աշխատակիցները Բաքու-Թբիլիսի-Ախալքալաքի-Կարս երկաթգծի կոնտակտային հաղորդալարերի կողոպտման մեղադրանքով ձերբակալել են 10 հոգու: Նման մեղադրանքներ են ներկայացրել եւս մեկին:

Հետաքննությունը պարզել է, որ մեղադրյալները տարբեր ժամանակներում հաղորդալարերը կտրում էին նաեւ երկաթուղային հանգույցում: Նման գործողություններով ընկերությանը հասցվել է 52 հազար լարիի վնաս:

ԲԵՍԼԱՆ ԲՈՒԹԲԱՆ «ԱԲԽԱԶԻԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏ»

Բռնազավթված Աբխազիայի, այսպես կոչված, կառավարությունը կգլխավորի Բեսլան Բութբան: Բութբային վարչապետի պաշտոնում նշանակելու հրամանագիրը Աբխազիայի նորընտիր նախագահ Ռաուլ Խաջիմբան արդեն ստորագրել է: Լրատվամիջոցների տեղեկատվությամբ, 54-ամյա Բեսլան Բութբան հանդիսանում է ինքնահռչակ Աբխազիայի «Տնտեսական զարգացման կուսակցության» լիդերը:

ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ 69-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ՆՎԱՃԵՆՔ ԺՈՂՈՎՐԴԻ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՄԱՆԴԱՏԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

սություն սկսեց առեւտրական, տնտեսական ու մշակութային կապերը վերականգնելու շուրջ: Այդ ռազմավարական ուղղությունը «էական արդյունքներ բերեց եւ օգնեց թուլացնել լարվածությունը Վրաստանի ու Ռուսաստանի հարաբերություններում»:

«Վերսկսվեց առեւտուրը, եւ Վրաստանից Ռուսաստան արտահանումն ավելացավ 300 տոկոսով: Մենք սկսեցինք ավելի խաղաղ գոյակցել որպես հարեւաններ: Այդ մոտեցումը նաեւ բերեց ամբողջ Հարավային Կովկասի կայունացման»,- հայտարարել է վարչապետը: Դրա հետ մեկտեղ նա պնդել է, որ «Ռուսաստանին ձիթենու ճյուղ պարզելու» վրացական իշխանությունների փորձերը «նույն ոգով համագործակցելու պատասխան չեն ստացել»:

ՄԱԿ-ի բարձր ամբիոնից Վրաստանի վարչապետն ուղերձ հղեց աբխազ եւ օս ժողովուրդներին: «Ես երազում եմ այն մասին, որ մենք ապրենք միասին եւ մեր ժողովուրդների միջեւ վստահությունը վերականգնվի: Մենք հստակ ուղերձ ենք հղում մեր աբխազ եւ օս եղբայրներին. Եվրոպայի դռները բաց է նաեւ ձեզ համար, ձեզ տրված է Եվրոպայի հետ ասոցիացիայի բոլոր առավելություններից օգտվելու բացառիկ հնարավորություն, ինչը նախատեսում է անայցեգրային պայմանակարգ Եվրամիության անդամ երկրների հետ, գործարարության համար եվրոպական շուկայի մատչելիություն, հանրակրթական եւ այլ ծրագրերի մատչելիություն»,- հայտարարեց Վրաստանի վարչապետը:

Դիմելով ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 69-րդ նստաշրջանի մասնակիցներին՝ Վրաստանի վարչապետը մանրամասն ներկայացրեց վերջին երկու տարիների ընթացքում երկրի կառավարության ձեռքբերումները: «Վերջին երկու տարիներին մենք իրականացրինք կոնկրետ քայլեր. հաղթահարեցինք կոռուպցիայի կախարդական շրջանը, բարձրաստիճանավորների անպատժելիության սինդրոմը: Մենք հաստատեցինք պետական կառավարման ժողովրդավարական բաց եւ հաշվետու համակարգ: Բոլոր ոլորտներում, սկսած առողջապահությունից ու կրթությունից եւ ավարտած էկոնոմիկայով, գրանցվել է ակնհայտ առաջընթաց: Զարգանում են ժողովրդավարական ինստիտուտները, մեր արտաքին քաղաքականությունը առավել լավ է ապահովում երկրի անվտանգությունը, իսկ աճող էկոնոմիկան ուղղված է հօգուտ յուրաքանչյուր քաղաքացու բարօրության:

Վերջին երկու տարիների ընթացքում Վրաստանում անցկացված խորհրդարանական, նախագահական եւ տեղական մարմինների ընտրությունները կարելի է համարել օրինակելի:

Վրաստանի նոր սահմանադրությունը ապահովում է գործադիր իշխանության ապակենտրոնացումը եւ ուժեղացնում բոլոր մակարդակներով կառավարման համակարգի պատասխանատվությունը:

Մենք վերականգնեցինք օրենքի գերակայությունը, հիմնվեց անկախ դատարան, մեղադրյալներին վերապահվեցին ավելի շատ իրավունքներ: Այսօր մեր երկրի յուրաքանչյուր քաղաքացի իրավահավասար է օրենքի առաջ: Բացի այդ, մենք հստակորեն որոշել ենք բարենպաստ պայմաններ ստեղծել զանգվածային լրատվամիջոցների զարգացման համար»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին եւ հավելեց, որ, չնայած այդ ամենին, Վրաստանը ժողովրդավարության երիտասարդ երկիր է, եւ կառավարությունն առաջիկայում մեծ անելիքներ ունի: «Հենց այն պատճառով, որ Վրաստանը ժողովրդավարության ուղով փշոտ ճանապարհ է անցել, հետդարձը բացառված է: Ժողովուրդն իշխանություններից պահանջում է արդյունավետ գործողություն ու խոստումների կատարում եւ իր դիրքորոշումը հստակեցնում ընտրությունների ժամանակ: Մեր կառավարությունը պետք է նվաճի ժողովրդի վստահության մանդատն ու յուրաքանչյուր ընտրողի ձայնը»,- նշեց Վրաստանի վարչապետը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՈՐՆ ԷՐ ԲՅՈՒՋԵԻ ԹԵՐԱԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏՃԱՌԸ

Ընթացիկ տարվա վեց ամսվա արդյունքների համրագումարումը ցույց տվեց, որ առանձին գերատեսչությունների կողմից թույլ է տրվել բյուջեով հատկացված գումարների մոբիլիզացման եւ իրացման ծրագրի թերակատարում:

Նման գերատեսչությունների թվին է պատկանում Վրաստանի գյուղատնտեսության նախարարությունը: Վերոնշյալի կապակցությամբ, «Վրաստանի» թղթակիցը հանդիպում ունեցավ Վրաստանի գյուղատնտեսության նախարար Օթար Դանելիայի հետ:

- Բատոնո Օթար, 2014 թվականի առաջին վեց ամիսների համար գյուղատնտեսության նախարարությանը հատկացվել էր 169,94 միլիոն լարի, թեպետ անցած ժամանակահատվածում այդ գումարից իրացվել էր 145,62 միլիոնը, այսինքն՝ պլանը իրացվել էր 85,8 տոկոսով: Ինչո՞վ կբացատրեիք դա, եւ մինչեւ տարեվերջ որքանո՞վ է իրատեսական հատկացված գումարի իրացման հավանականությունը:

- Ցավոք, իրոք թույլ է տրվել թերացում: Առկա էին օբյեկտիվ պատճառներ, որոնք թույլ չտվեցին լրիվությամբ իրացնել ստացված գումարը: Օրինակ, մշակվել էին հատուկ ծրագրեր, որոնք պահանջում էին հատուկ սարքավորումների ձեռքբերում, ինչը իրականացվեց ձգձգումներով: Առկա էին նաեւ այլ հիմնախնդիրներ, որոնք անդրադարձան բյուջետային գումարների իրացման գործընթացի վրա, թեպետ գտնում եմ, որ հատկացված գումարի 85 տոկոսի իրացումն այնքան էլ վատ ցուցանիշ չէ:

Սակայն, ինչ խոսք, իրացումը պետք է լինի առավելագույնս, հետեւաբար, մոտ ժամանակներում կփորձենք իրավիճակն ուղղել: Նշեմ, որ արդեն այսօր նկատվել է դրական միտում: Կարծում եմ, որ մինչեւ տարեվերջ առաջադրանքը կկատարվի:

- Հիմնախնդրային է մնում մարկետինգի համար հատկացվող ծախսերի իրացումը: Օրինակ, միջազգային շուկայում վրացական գյուղատնտեսական ապրանքների գովազդման համար հատկացվել էր 500 հազար լարի, որից իրացվել էր ընդամենը 117,3 հազարը, ինչը կազմում է ծրագրի 23,5 տոկոսը: Այդ առումով, որքանո՞վ կարելի է արդյունավետ համարել նախարարության աշխատանքն իրացման շուկաների ընդլայնման հարցում:

- Մենք գործնական մոտեցում ենք ցուցաբերում այդ հարցում եւ արտահանման ծավալների ավելացումը մեր գլխավոր առաջնահերթություններից մեկն է:

Երկու շաբաթ առաջ գտնվում էի Չեխիայում, որտեղ բավականին հետաքրքիր հանդիպումներ ունեցա արտահանման հարցի կապակցությամբ: Ծրագրված են նաեւ այլ այցելություններ, մասնավորապես՝ Ադրբեջան, ԱՄՆ: Բացի այդ, փորձում ենք ներթափանցել այն երկրների շուկաները, որտեղ մինչ այդ չենք աշխատել: Առկա է լուրջ ներուժ, որը հարկ է խրախուսել: Մասնավորապես, նկատելի առաջընթաց է գրանցվել գինեգործության ոլորտում, աճում է վրացական գինու պահանջարկը, ինչը ողջունելի փաստ է:

- Գերատեսչությունն ինչ ծրագրեր է մշակում՝ կապված 2015 թվականի բյուջեի հետ: Որքանո՞վ տեղեկացված ենք, ծրագրվում է ավելացնել գյուղատնտեսության նախարարության ֆինանսավորումը: Ի՞նչ ուղղություններով եք մտադիր իրականացնել միջոցների ներդրումը:

- Մեզ արդեն ներկայացրել են բյուջեի նախագծի աշխատանքային տարբերակը: Դրանում ներգրավված են բացարձակապես նոր ուղղություններ, որոնք նախկինում չկային: Մասնավորապես, մեծ ուշադրություն է հատկացվում կոոպերատիվների աջակցությանը: Ծրագրվում է նաեւ ավելացնել լաբորատորիաների, գիտական կենտրոնների ֆինանսավորումը: Ֆինանսական աջակցություն կստանան նաեւ պետական օգնության կարիք ունեցող ոլորտները:

Իրոք, գյուղատնտեսության նախարարության բյուջեն ավելացվում է, թեպետ, չեմ կարող ասել՝ որքան կկազմի այն, քանի որ, ինչպես ասացի, խոսքը վերաբերում է բյուջեի աշխատանքային նախագծին:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Սոցիալապես անպաշտպան ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակը կգնահատվի նոր մեթոդով: Ներկա դրությամբ դեռեւս հայտնի չէ, թե ինչ չափորոշիչներով են գնահատվելու սոցիալապես անպաշտպան ընտանիքները: Չափման մեխանիզմները դեռեւս գտնվում են մշակման փուլում:

Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Դավիթ Սերգեյենկոն գտնում է, որ սոցիալապես անպաշտպան ընտանիքների վիճակի գնահատման ներկայիս չափորոշիչները երկու նշանակալի թերություն ունեն: Մասնավորապես, թույլտվությունից առավել է սոցիալական գործակալների կողմից ընտանիքների գնահատման սուբյեկտիվ մոտեցման մակարդակը: Կատարյալ չէ նաեւ գնահատման մեթոդը: Մասնավորապես, սոցիալապես անպաշտպանի միավորների շնորհումը շատ հաճախ օգտագործվում է որպես քաղաքական լծակ: Ելնելով վերոնշյալից՝ Վրաստանի առողջապահության նախարարությունը, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ մեկտեղ, ձեռնամուխ է եղել գնահատման նոր մեթոդի մշակմանը, որը նախարարության հավաստմամբ, շատ ավելի արդարացի եւ թափանցիկ կլինի, քան ներկայումս գործող համակարգը:

Դավիթ Սերգեյենկոյի հայտարարության համաձայն, ներկա դրությամբ դժվար է պարզել, թե նոր մեթոդի կիրարկմամբ որքան կկազմի սոցիալապես անպաշտպանների թիվը: Նախարարի խոսքերով, ակնհայտ է համակարգի վերանայման եւ նոր մեխանիզմների մշակման անհրաժեշտությունը:

«Որպես քաղաքական լծակ՝ մենք վերացրինք համակարգի շահարկումը: Նշանակալից առաջընթաց է նկատվել նաեւ միավորների շնորհման հարցում: Մենք հնարավորինս արեցինք, որպեսզի այդ գործընթացը լինի արդարացի ու թափանցիկ: Միավորների վերանայման գործընթացի համար սահմանել ենք որոշակի ընթացակարգ ու ժամանակահատված: Այս ամենի ներդրման համար պահանջվում է որոշակի ժամանակ»,- հայտարարեց Սերգեյենկոն եւ հավելեց, որ ներկայումս դժվար է կանխագծել, թե նոր մեթոդի կիրարկման դեպքում սոցիալապես անպաշտպանների թիվը կնվազի կամ կաճի, թեպետ նոր մեթոդն առավելագույնս կապահովի գործընթացի օբյեկտիվությունն ու արդարությունը:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի վերջին տվյալների համաձայն, աղքատության շեմին գտնվող երեխաների թիվը 25-ից հասել է 27 տոկոսի, ինչը, բնականաբար, բացասական ազդեցություն է գործում երկրի վարկանիշի վրա:

Առողջապահության ոլորտի փորձագետները չափորոշիչների վերանայման հարցում իշխանության դիրքորոշումն արդարացված են համարում, թեպետ գտնում են, որ դա դժվար թե նպաստի աղքատության հաղթահարմանը: Փորձագետների հայտարարությամբ, սոցիալապես անպաշտպան քաղաքացիների թվի աճը պայմանավորված է սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացմամբ կամ այդ վիճակի անփոփոխ լինելուց:

Փորձագետների համոզմամբ, ընդհանուր առմամբ, սոցիալական նպաստների շնորհումը բացասաբար է անդրադառնում հասարակության մտածելակերպի վրա: Ճիշտ է, ոմանց համար 30 լարի սոցիալական նպաստը, իրոք, հացի փող է, եւ նմաններին օգնելն իրականում մարդասիրական գործ է, թեպետ դրանով աղքատության հիմնախնդիրը հնարավոր չէ լուծել:

Փորձագետները նշում են նաեւ չափորոշիչների սահմանման ու սոցիալական վիճակի գնահատման նոր մեթոդի հետ կապված բարդությունները: Տվյալ պարագայում առավել նպատակահարմար է անմիջականորեն սոցիալական նպաստ ստանալու հավակնորդ քաղաքացու կողմից ունեցվածքային հռչակագրի լրացումը, ինչը թույլ կտա առավել կոնկրետ գնահատել նրա սոցիալական վիճակը: Հենց այդ հռչակագրի վրա հենվելով էլ՝ հնարավոր կլինի հաշվարկել եւ շնորհել միավորները:

Առողջապահության ոլորտի աշխատակիցների համոզմամբ, սոցիալապես անպաշտպան ընտանիքների իրավիճակի գնահատման, չափորոշիչների փոփոխումը թույլ կտա պետությանը առավել ակտիվացնել սոցիալական նախագծերի կիրարկումը, ինչը շատ ավելի դրական ազդեցություն կգործի աղքատության հիմնախնդրի հաղթահարման վրա: Գնահատման մեթոդի կատարելագործումը պետությանը թույլ կտա է'լ ավելի նշանակալի ազդեցություն գործել սոցիալապես անպաշտպան ընտանիքների սոցիալ-տնտեսական իրավիճակի կարգավորման վրա: Թեպետ այդ ամենի հետ մեկտեղ, պետությունը պետք է ցուցաբերի նրբանկատ մոտեցում: Օրինակ, սոցիալապես անպաշտպան ընտանիքում նոր առարկայի ի հայտ գալը պետք է գնահատվի ոչ թե ելնելով դրա առկայությունից, այլ կենսական անհրաժեշտությունից, ինչը, բնականաբար, չպետք է ազդի շնորհվող միավորների վրա: Փորձագետների համոզմամբ, եթե իշխանությունների կողմից մշակվող չափորոշիչների սահմանման նոր մեթոդը նկատի առնի վերոնշյալ նրբությունները, ապա այն կդառնա առավել գործուն ու արդարացի, ինչը նշանակալի ազդեցություն կգործի աղքատության շեմին գտնվող ընտանիքների կենսամակարդակի բարելավման վրա:

Բնականաբար, աղքատության հաղթահարման ուղղությամբ, նշանակալի առաջընթաց քայլ էր համընդհանուր առողջապահության ծրագրի ներդրումը: Բավական է նշել, որ ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ից համընդհանուր առողջապահության համակարգի ծառայությունից օգտվում է ավելի քան 400 հազար քաղաքացի՝ ուսանողներ, կենսաթոշակառուներ, մինչեւ 5 տարեկան երեխաներ, սահմանափակ հնարավորություններ ունեցող անձինք: Ապահովագրական նոր ծրարը բավականին ձեռնտու է: Ի տարբերություն մասնավոր ապահովագրության, երբ ծրագրավորված վիրահատությունների նախապատրաստության համար տրվում է չորս ամիս, ներկայումս վիրահատության հետ մեկտեղ հիմնախնդիրները կարգավորվում են երկու ամսում: Միաժամանակ, մարդկանց տրվում է ընտանեկան բժիշկների ու պոլիկլինիկաների ընտրության իրավունք, որը նախկին ապահովագրական ծրարում նախատեսված չէր:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ